World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

«Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամ

(կազմակերպության անվանումը)

ԵՐԵԽԱՅԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

5 – ԱՄՅԱ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ճամբարակ

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամը (այսուհետ՝ Վորլդ Վիժն հիմնադրամ) ստեղծվել է հիմնադիրի 08.03.2019թ. որոշմամբ և գրանցվել է ՀՀ-ում 06.05.2019թ.:

Վորլդ Վիժն հիմնադրամի պետական գրանցման վկայականի համարն է՝ 222.160.1072621:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

Վորլդ Վիժն հիմնադրամի նպատակներն են՝

1. աջակցել և նպաստել երեխաների բարեկեցությանը Հայաստանում.
2. աշխատել աղքատների և Ճնշվածների հետ՝ նպաստելով մարդու կարողությունների զարգացմանը և վերացնել աղքատությունը.
3. աջակցել մարդու կարողությունների զարգացմանը, որը հիմնվում է համայնքի վրա և հատկապես հասցեագրում է երեխաների կարիքները.
4. աջակցել ազգային պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ երեխաների պաշտպանության համակարգերը և կառուցվածքները բարելավելու նպատակով.
5. բարելավել շրջակա միջավայրը, որտեղ երեխաներն ունեն դրական և խաղաղ հարաբերություններ իրենց ընտանիքների և համայնքների հետ.
6. զարգացնել դեռահասների կրթությունը և կարողությունները.
7. իրականացնել կրթական, առողջապահական, սոցիալական, մշակութային և այլ երեխայակենտրոն ծրագրեր, մասնագիտական ուսումնական դասընթացներ և այլ գործողություններ, որոնք բավարարում են երեխաների և երիտասարդության կարիքները Հայաստանի տարածքում.
8. նպաստել Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության մոդելի զարգացմանը.
9. հայցել, տրամադրել և բաշխել մարդասիրական օգնություն և նվիրատվություն:

Վորլդ Վիժն հիմնադրամի խնդիրներն են՝

1. իրականացնել սոցիալապես անապահովների, առավել խոցելիների և շահառուների ինքնօգնության կարողությունների, սոցիալական հմտությունների զարգացմանը, նրանց կենսամակարդակի բարձրացմանը, եկամուտների ավելացման և կյանքի որակի բարելավմանն ուղղված ծրագրեր,
2. մատուցել հատուկ կարիքներով երեխաների համար վերականգնողական ծառայություններ,
3. իրականացնել սակավ հնարավորություններ և հաշմանդամություն ունեցողներ երեխաների աջակցման ծրագրեր,
4. իրականացնել առողջապահական ծրագրեր, այդ թվում՝ նպաստել առողջ ապրելակերպի խթանմանը,
5. իրականացնել կրթական ծրագրեր, դասընթացներ և ոչ ֆորմալ ուսուցումներ,
6. վարել սոցիալապես անապահովների, առավել խոցելիների սոցիալական դեպքեր:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

Վորլդ Վիժն հիմնադրամի իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով ու իրավական ակտերով, հիմնադրամի կանոնադրությամբ:

Վորլդ Վիժն հիմնադրամի աշխատակիցների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Ռաֆի Ռուբենի Դուդակյան՝ Վորլդ Վիժն հիմնադրամի գործադիր տնօրեն,

2. Գեղարքունիքի մարզում Վորլդ Վիժն հիմնադրամն ունի գրասենյակներ, ինչպես նաև երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոններ Ճամբարակում, Գավառում և Վարդենիսում:

Ճամբարակի և Շողակաթի տարածաշրջանում՝

- համայնքային սոցիալական աշխատողներն են՝ Գայանե Նադիրյան, Հասմիկ Սարիբեկյան, Մելինե Խաչատրյան, Ռուզաննա Զաղոյան, Տաթևիկ Խեչոյան և Տաթևիկ Օհանյան,

- Լոգոպեդ, հոգեբան, ֆիզոթերապիստ, արտթերապիստ, կյանքի հմտությունների խմբակավար, ծրագրերի համակարգող են՝ Ռոզա Բարսեղյան, Անի Մակարյան, Արթուր Սարիբեկյան, Դավիթ Թիգյան, Հասմիկ Կեշիշյան, Լուսինե Լազարյան, Մարինե Ղազարյան, Թագուհի Միրզոյան:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

Վորլդ Վիժն հիմնադրամի գործունեության ոլորտներն են՝

1. Գեղարքունիքի մարզում իրականացնում է համայնքային սոցիալական աշխատանքներ,
2. Մատուցում է հատուկ կարիքներով երեխաների համար վերականգնողական ծառայությունները Ճամբարակում:

3. Իրականացնում է ծայրահեղ աղքատ, առավել խոցելի ընտանիքների երեխաների համար այլընտրանքային ծառայությունների մատուցում Ճամբարակի համայնքային կենտրոնում,
4. Իրականացնում է սակավ հնարավորություններ և հաշմանդամություն ունեցողների աջակցման ծրագրեր և այլն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Ճամբարակի համայնքային կենտրոնում (հասցեն՝ Տիգրան Մեծ փողոցի 17/1) կշարունակի գործել հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգված և կահավորված՝
(Ա) Ճամբարակի երեխայի և ընտանիքի զարգացման, վերականգնողական համայնքային կենտրոնը,
(Բ) ծայրահեղ աղքատ, առավել խոցելի ընտանիքների համար կկազմակերպվեն տարբեր դասընթացներ, խմբակներ սոցիալական հմտությունները և մասնագիտական կարողությունները զարգացնելու նպատակով:

(Ա) Ճամբարակի երեխայի և ընտանիքի զարգացման, վերականգնողական համայնքային կենտրոն

ՎՎՀ Ճամբարակի Տարածքային Ծրագրի (ՏԾ) շահառու Ճամբարակ և Շողակաթ խոշորացված համայնքներում իրականացված քարտեզագրման համաձայն տարածաշրջանում վերականգնողական ծառայությունների կարիք ունեն 43 երեխա (այդ թվում Առավել խոցելի/խոցելի (ԱԽ/Խ), ընտանիքներից), որից մոտ 30--ը ունեն ֆիզիկական թերապիայի և էրգոթերապիայի կարիք, 20-ն ունեն խոսքի ճիշտ արտաբերման խնդիր և մտավոր ունակությունների զարգացման հապաղում, բոլոր երեխաներն ունեն հոգեբանի ծառայությունների կարիք: Ունենալով այս խնդիրները և չստանալով դրանք նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ ծառայությունները՝ երեխաները հետ են մնում տարիքային զարգացումից, իրենց հասակակիցների հետ հաղորդակցումից և առօրյա շփումից: Դա էլ ավելի է խորացնում ունեցած խնդիրները:
Վերականգնողական կենտրոնի աշխատանքի հիմնական նպատակը երեխայի տուժած ֆունկցիայի վերականգնումն է, որը թույլ կտա սահմանափակ կարողությամբ անձին հարմարվել շրջապատին և հանդես գալ իր հնարավորությունների առավելագույն մակարդակով, լինել հասարակության լիիրավ անդամ:

Վերականգնողական կենտրոն հաճախող սահմանափակ կարողություններով երեխաները հնարավորություն կունենան տարբեր խմբակների ու միջոցառումների մասնակցության միջոցով շփվել իրենց նորմոտիպիկ զարգացում ունեցող հասակակիցների հետ, որն էլ կօգնի նրանց խոսքի և շփման հմտությունների զարգացմանը, կնախապատրաստի նրանց սոցիալիզացիային:

Ծրագրի շրջանակներում մասնագետները՝ երեխաների կարիքների գնահատումից հետո, կմատուցեն համապատասխան վերականգնողական ծառայություններ՝ անհատական և խմբային սկզբունքով: Կենտրոնի կողմից կապահովվի երեխաներին համայնքներից կենտրոն և հակառակը տեղափոխելու տրանսպորտային ծառայությունը: Կենտրոնը կհամագործակցի նաև ՏԻՄ –երի հետ՝ երեխաների տեղափոխման կազմակերպման նպատակով:

Վորլդ Վիժն հիմնադրամը չի սահմանափակվելու սույն ծրագրի իրականացման համար առաջարկվող 5 տարիների ժամկետով. այս ծրագիրը հանդիսանում է հիմնադրամի ռազմավարական նպատակներից մեկը և կկրի շարունակական բնույթ:

(Բ) Ճամբարակ և Շողակաթ համայնքների սոցիալական աշխատանք,

Հիմնական նպատակը ՏԻՄ, ՍՄՄ-ի հետ համատեղ հայտնաբերել ծայրահեղ աղքատ, առավել խոցելի, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին; գնահատել կարիքը և օգտագործելով համայնքային սոցիալական աշխատանքի մեթոդները, գործիքները՝ աջակցել շահառու ընտանիքներին որ զարգացնեն կարողությունը իրենց դժվարին իրավիճակը հաղթահարելու համար: Վորլդ Վիժն հիմնադրամն ունի համապատասխան համաձայնագիր Ճամբարակ, Շողակաթ խոշորացված համայնքների ՏԻՄ-երի հետ՝ համագործակցելով համայնքային սոցիալական աշխատանք իրականացնելու համար:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Ճամբարակի Տիգրան Մեծ փողոցի 17/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հասցեում Վորլդ Վիժնը 2020-2021թթ. ընթացքում կատարել է 48.5 մլն. դրամ վերանորոգման և 7.1 մլն. դրամ կահավորման աշխատանքներ: Վերը նշված աշխատանքները լիովին բավարար են կենտրոնի անխափան աշխատանքի համար, և լրացուցիչ ներդրման կարիք, ըստ էության, ներկայումս չկա:

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարիների՝ 2022-2027թթ. համար Վորլդ Վիժն հիմնադրամի գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ճամբարակի տարածքային ծրագիրը՝ այդ թվում երեխայի և ընտանիքի զարգացման համայնքային կենտրոնի անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսերը, ընդամենը՝ 31.3 մլն. դրամ:

Հնարավոր է նաև համայնքի և մարզպետարանի աջակցությամբ իրականացվեն համատեղ ծրագրեր, որոնց մասով համապատասխան բյուջեն կհաստատվի փոխհամաձայնությամբ:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 5 տարվա՝ 2022-2027թթ. ընթացքում:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարիներին Վորլդ Վիժն հիմնադրամը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Երեխայի և ընտանիքի զարգացման ու վերականգնողական համայնքային կենտրոնի պահպանման ու սպասարկման հետ կապված ծախսերի ապահովում,
- Սերտ համագործակցել ՏԻՄ-երի և Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչների հետ, բացահայտել խոցելի երեխաների և ընտանիքների կարիքները, համատեղ մշակել և իրականացնել աջակցության ծրագրեր,
- Ապահովել կենտրոնի սպասարկող մասնագետների և աշխատակիցների աշխատավարձը և հարկեր վճարումը, կոմունալ և վարչական ծախսերը, անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը:
- Ձեռնարկել բոլոր միջոցառումները՝ երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոնի գործունեության անխափանության և արդյունավետության ապահովման համար:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ Վորլդ Վիժն հիմնադրամը իր կողմից ստեղծված վերականգնողական և խնամքի կենտրոնի միջոցով կապահովի՝

1. հարմարեցված հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների ազատ տեղաշարժը, ծառայությունների իրականացումը սպորտային-վերականգնողական սարքավորումներով, մարզական սարքերով, ինչպես նաև լոգոպեդի, հոգեբանի, ֆիզիոթերապիայի, էրգոթերապիայի, արտթերապիայի հագեցված սենյակներում ծառայությունների մատուցումը:
2. Մատուցվող վերականգնողական ծառայություններ՝ թիմային մոտեցման սկզբունքով: Թիմում ընդգրկված կլինեն աշխատանքների համակարգող/սոցիալական աշխատող, ֆիզիկական և աշխատանքային թերապիստ, արտթերապիստ, էրգոթերապիստ, լոգոպեդ, հոգեբան:

3. Վերականգնողական ծառայություններ կստանա տարեկան մինչև 80 երեխա, որից 40-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխաներ են, իսկ 40–ը՝ առավել խոցելի ընտանիքների՝ խոսքի զարգացման և հոգեբանական տարբեր խնդիրներ ունեցող երեխաներ:
4. Կենտրոնում կան երեխաների և նրանց ծնողների համար խմբային պարապմունքների համար նախատեսված սենյակներ:
5. Համայնքային սոցիալական աշխատողների սենյակ, հանդիպումների սենյակ:
6. Համայնքային սոցիալական աշխատանքի ծառայություն մատուցվում է Ճամբարակի և Շողակաթի խոշորացված համայնքներում:
7. Նախատեսվում է՝

   - Մեկ տարվա ընթացքում վերականգնողական ծառայություններ մատուցել մինչև 80 երեխայի (ներառյալ՝ մինչև 40 հաշմանդամություն ունեցող երեխաներ և 40 առավել խոցելի ընտանիքների երեխաներ, որոնք հոգեբանական կամ խոսքի զարգացման խնդիրներ ունեն)
   - Կարողությունների զարգացման դասընթացներ իրականացնել կենտրոնի ծառայություններից օգտվող 80 երեխաների ծնողների համար (ըստ կարիքի՝ ծնողավարության, ֆինանսական գրագիտության, կենցաղավարության և այլն)
   - Սոցիալական աշխատանք իրականացնել կենտրոն հաճախող երեխաների ընտանիքների հետ (ըստ կարիքի):

«Վորլդ Վիժն Հայաստան»
Երեխաների պաշտպանության հիմնադրամի
Գործադիր տնօրեն՝

Ռաֆի Դուդակյան .....